ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հոկտեմբերի 2023 թվականի N 426 -Ա

«ՊՈՂՈՍ ՏԵՐ-ԴԱՎԹՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՎԵՐԻՆ ԽՈՏԱՆԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՀԵՐՄԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ ՍՈՆԱ ԹԵՎԱՆՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 163-րդ հոդվածներով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով «Պողոս Տեր-Դավթյանի անվան Վերին Խոտանանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար Հերմինե Պողոսյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ եմ՝

1. «Պողոս Տեր-Դավթյանի անվան Վերին Խոտանանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար Հերմինե Պողոսյանին 2023 թվականի հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 10-ը ներառյալ տրամադրել 2022-2023 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդի մի մասը՝ 10 աշխատանքային օր:

2. Արձակուրդում գտնվելու ընթացքում «Պողոս Տեր-Դավթյանի անվան Վերին Խոտանանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն ՊՈԱԿ-ի ուսուցչուհի Սոնա Թևանյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. Ղուկասյան**

2023թ.հոկտեմբերի 27
ք. Կապան